ԱՐԴԱՐԱՑԻ ԴԱՏԱՎՃԻՌ

ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Հատուկ Դատական Ատյանը մի քանի օր առաջ դատական քննությունից հետո վճիռ կայացրեց Հայրենիքի դավաճան Բերիայի և նրա ավազակային խմբի անդամների նկատմամբ։ Մարդկային կերպարանքը կորցրած ճիվաղների ոհմակը՝ Բերիան, Մերկուլովը, Դեկանոզովը, Կոբուլովը, Գոգլիձեն, Մեշիկը, Վլոդզիմիրսկին դատապարտվեցին բարձրագույն պատժի՝ գնդակահարության։ Դատավճիռն ի կատար է ածված։ Մարդկային ցեղի գարշահոտ տականքը ոչնչացված է։

Հատուկ Դատական Ատյանի վճիռը սովետական մարդիկ դիմավորեցին մեծագույն գոհունակությամբ. դա մեր ամբողջ սովետական ժողովրդի միահամուռ կամքի արտահայտությունն է, միակ արդարացի դատավճիռը Հայրենիքի ստոր դավաճանների, պարտիայի և սովետական ժողովրդի անողոք թշնամիների նկատմամբ։ ՍՍՌՄ Դատախազության հաղորդագրության մեջ շարադրված՝ բանդիտ Բերիայի և նրա գործակիցների հրեշավոր ոճրագործությունների սարսափելի փաստերը համաժողովրդական զայրույթ առաջացրին, փոթորկեցին ամբողջ սովետական ժողովրդին։ Ժողովրդական ցասման խուլ հորդանքը տարածվեց Սովետական Հայրենիքի մեկ ծայրից մինչև մյուսը։ Անհամար սովետական մարդիկ իրենց բազմամարդ ժողովներում անարգանքի սյունին էին գամում սովետական ժողովրդի ոխերիմ թշնամիներին, իմպերիալիզմի ստոր վարձկաններ Բերիային ու ցավակիցներին նրա խմբին և պահանջում՝ մա՛հ դավաճաններին։ Ժողովրդի կամքը կատարվե՛ց։

Ինչպիսի՜ նողկալի, ահավոր ոճիրներ ասես, որ չէին գործել [illegible] արգահատելի այդ ավանտյուրիստները։ Նրանք ձգտում էին ոչնչացնել սովետական ժողովրդի հերոսական պայքարով ձեռք բերված նվաճումները, մեր երկրում վերականգնել կապիտալիզմը, ստրկության մատնել սովետական ազատ ժողովրդին։ Այդ ստոր նպատակների իրականացման համար նրանք կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ, չէին խորշում ոչ մի նողկալի արարքից։ Իշխանությունը զավթելու մոլուցքով տարված՝ նրանք գործում էին հօգուտ օտարերկրյա կապիտալի, ամենաստոր գործարքների մեջ էին մտնում իմպերիալիստական հետախուզությունների հետ, ձգտելով թուլացնել Սովետական պետության պաշտպանունակությունը, Ներքին գործերի մինիստրության օրգաններում գրաված իրենց դիրքն օգտագործելով՝ սպանում, ոչնչացնում էին Կոմունիստական պարտիային ու Սովետական կառավարությանը նվիրված ազնիվ կադրերին։

Դատական քննությունը լիովին հաստատեց, որ դավաճանելով Հայրենիքին և գործելով օտարերկրյա կապիտալի օգտին, ավանտյուրիստ Բերիան երկար տարիների ընթացքում հանցավոր [illegible] իր հետ կապված մարդկանցից կազմակերպել էր Սովետական պետության թշնամի դավադիրների մի խումբ, որն իր առջև հանցավոր նպատակ էր դրել՝ Ներքին գործերի մինիստրության օրգանները կենտրոնում և տեղերում օգտագործել Կոմունիստական պարտիայի և ՍՍՌՄ կառավարության դեմ, Ներքին գործերի մինիստրությունը վեր դասել պարտիայից և կառավարությունից՝ իշխանությունը զավթելու, սովետական բանվորա-գյուղացիական կարգը լիկվիդացնելու, մեր երկրում բուրժուազիայի տիրապետությունը վերականգնելու համար։

Սովետական երկրում չունենալով ոչ մի սոցիալական հենարան, ավանտյուրիստներն իրենց հույսերը կապում էին Սովետական Միությանը թշնամի իմպերիալիստական աշխարհի հետ, արտաքին օգնություն սպասելով նրանցից։ Դատարանը հաստատեց, որ լրտես Բերիան օտարերկրյա հետախուզություններին վաճառված է եղել դեռևս քաղաքացիական պատերազմի ժամանակներից, երբ Բաքվում և Վրաստանում գործել է իբրև անգլիական հետախուզության գործակալ, հետագայում ավելի ևս ընդլայնելով իր լրտեսական գործունեությունը։

Ստոր դավադիրները ոճրագործ Բերիայի գլխավորությամբ ձեռք էին բարձրացրել Սովետական պետության հիմքերի հիմքը հանդիսացող սովետական ժողովուրդների բարեկամության վրա։ Իրենց դավաճանական նպատակներով նրանք ճգնում էին թշնամություն ու երկպառակություն սերմանել Սովետական Միության ժողովուրդների միջև, խարխլել ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը, նրանց միասնությունը ռուս մեծ ժողովրդի հետ, ակտիվացնել բուրժուա-նացիոնալիստական տարրերին Միութենական ռեսպուբլիկաներում։

Սովետական ժողովրդի այդ ոխերիմ թշնամիները, գործելով ժողովրդի թիկունքում, դավեր էին նյութում պայքարով ձեռք բերված նրա երջանիկ կյանքի, նրա բարօրության դեմ, երկրում պարենային դժվարություններ ստեղծելու նպատակով այդ հրեշները ճգնում էին ամեն կերպ խանգարել, սաբոտաժի ենթարկել ժողովրդական սպառման առարկաների արտադրությունն ամեն կերպ ընդլայնելու, սովետական ժողովրդի բարեկեցությունն անշեղորեն բարձրացնելու ուղղությամբ պարտիայի և կառավարության նշած կարևորագույն միջոցառումների կենսագործումը։

Հայրենիքի դավաճանների, ստոր մարդասպանների ու լրտեսների, ժողովրդական երջանկության մոլի թշնամիների նենգ դիտավորությունները, նրանց հրեշավոր դավերը չիրականացան և չէին կարող իրականանալ։ Ոճրագործները մերկացվեցին, սովետական արդարադատության հատու սուրը գլխատեց հրեշին։

Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի անվանի վարպետ, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Հմ. Դիլանյանը իր ելույթում ասաց.

— Մենք խորին գոհունակության զգացմունքով իմացանք, որ սովետական ժողովրդի չարամիտ թշնամիները գնդակահարված են։ Թող այդ բանը դաս լինի բոլոր նրանց համար, լինեն դրանք ներքին թե արտաքին թշնամիներ, ովքեր կհամարձակվեն գնալ ճիվաղ դավաճանների ճանապարհով, ձեռք բարձրացնել այն ամենի վրա, ինչ ստեղծվել է մեր երկրում սովետական ժողովրդի քրտնաջան աշխատանքով։

Բերիայի և նրա գործակիցների հակասովետական բանդայի մերկացման գործում մեծ է Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ծառայությունը, որոնք կարողացան ժամանակին կասեցնել թշնամու որոգայթները և վնասազերծ անել նրան։ Ահա թե ինչու սովետական մարդիկ այսօր ի սրտե իրենց գոհունակությունը հայտնելով սովետական դատարանի արդար վճռի առթիվ, երախտագիտության ջերմ խոսքեր են ուղղում հարազատ Կոմունիստական պարտիային և Սովետական կառավարությանը։ Անսահման երախտագիտության այդ զգացմունքն արտահայտելով, շինարար բանվոր Լ. Պողոսյանն ասաց.

— Մենք շնորհակալություն ենք հայտնում Կոմունիստական պարտիային և Սովետական կառավարությանը, որ նրանք ժամանակին հայտնաբերեցին ու դիմակազերծ արեցին իմպերիալիզմի այդ վարձու գործակալներին։ Մենք հավաստիացնում ենք պարտիային և կառավարությանը, որ այսուհետև ավելի կբարձրացնենք մեր ռևոլյուցիոն զգոնությունը, կաշխատենք բազմապատկված եռանդով, կպայքարենք երկրին ավելի շատ արտադրանք տալու համար և դրանով ավելի կամրապնդենք մեր Հայրենիքի հզորությունը։

Սովետական ժողովուրդը իր առաջընթացի ճանապարհից միշտ դեն է շպրտել ամեն տեսակի թշնամիներին, իր հաղթական երթը խանգարողներին և, մաքրվելով աղտեղություններից, ավելի է հզորացել, ավելի սերտորեն է համախմբվել իր հարազատ Կոմունիստական պարտիայի շուրջը, դարձել ավելի միաձույլ, ավելի անխոցելի։ Ինչպես միշտ, այս անգամ էլ թշնամիների ոտնձգությունները հողմացրիվ եղան՝ զարկվելով պարտիայի, կառավարության և ամբողջ սովետական ժողովրդի ամրակուռ միասնությանը։ Հարազատ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը վստահ առաջ է ընթանում դեպի կոմունիզմ և ոչ մի ուժ ի վիճակի չէ կասեցնելու նրա հաղթական առաջընթացը։

ԿԻՑ ՍՐՎԵՍՏԻ ԵՎ